ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-AM

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԸՆՏՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ (ԱՐՏԱՀԱՆՈՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-2.2.3

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար: Ծրագրի նպատակն է ուժեղացնել կառավարության կարողությունները համարժեք խթանների միջոցով՝ ընկերություններին արտահանման խթանման և որակի ենթակառուցվածքների ծառայությունների մատուցման ոլորտում:

Ծրագիրն ունի 4 բաղադրիչ՝ (i) Բաղադրիչ 1: Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում (արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում), (ii) Բաղադրիչ 2: Ներդրումների և արտահանման խթանում, (iii) Բաղադրիչ 3: Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում և (iv) Բաղադրիչ 4: Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում:

Ծրագրի 2.2 ենթաբաղադրիչի նպատակն է (ա) մատուցել խորհրդատվական ծառայություններ՝ ընկերություններին աջակցելու նպատակով, որպեսզի նրանք թարմացնեն իրենց կառավարչական և տեխնիկական կարողությունները, (բ) ձեռք բերել արտահանման համար պահանջվող միջազգային հավաստագրման ձեռք բերման համար պահանջները, (գ) շուկա մուտք գործելու/օտարերկրյա ընդլայնման ռազմավարությունների մշակում, (դ) շուկայնացման ծրագրերի մշակում և իրականացում, այդ թվում նաև առևտրային ցուցահանդեսների ծրագրերի հաճախում և շուկայնացման անհատական ճամփորդությունների մշակում, (ե) հարմարեցված, ընկերության համար առանձնահատուկ օտարերկրյա շուկայի հետազոտություն, (զ) արտահանման համար նոր ապրանքների և ծառայությունների մշակում և արտահանման խթանմանն ուղղված այլ ծառայություններ:

Այս ծրագրի իրականացնող Գործակալությունը Հայաստանի զարգացման հիմնադրամն է (ՀԶՀ), որը պատասխանատու է Արտահանողի զարգացման դրամաշնորհների համար: Իրականացնող Գործակալությունը կտրամադրի պահանջվող տեղեկություններ, անհրաժեշտ նյութեր պատշաճ

գնահատում անցկացնելու համար, ինչպես նաև կառաջնորդի Ընտրող հանձնաժողովի անդամներին լիագումար և գնահատման հանդիպումների ժամանակ (վիրտուալ և ֆիզիկական), ընդհանուր կազմակերպչական, ընթացակարգերի և այլ առնչվող հարցերի դեպքում:

Սույն հանձնարարականի նպատակն է ապահովել պատշաճ որակի Արտահանողի զարգացման դրամաշնորհների (ԱԶԴ) հայտերի հիմնավորված և թափանցիկ որոշումների կայացման գործընթաց, այդ թվում գնահատման և ֆինանսավորման որոշումները:

Հանձնարարականի տևողությունը մեկ տարի է՝ երկարացման հնարավորությամբ:

Ուստի Հայաստանի Զարգացման Հիմնադրամը և ՀՀ ֆինանսների նախարարության "Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն" ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս ունեն համապատասխան որակավորում և փորձ վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Որակավորում

Խորհրդատուն պետք է ունենա դրամաշնորհային, ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և ընտրման, ինչպես նաև դրանց մոնիթորինգի և գնահատման ծավալուն փորձ:

Պահանջվող որակավորում.

ա. Գիտական աստիճան բիզնեսի/ ֆինանսական կառավարման, տնտեսական զարգացման և/կամ հարակից ոլորտների:

բ. Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ մարկետինգի և բիզնեսի զարգացման, քաղաքականության մշակման, դրամաշնորհի կառավարման, արտահանման զարգացման և մասնավոր հատվածի զարգացմանն առնչվող այլ ոլորտներում:

գ. Համաշխարհային տարբեր շրջաններում արտահանման ծրագրերի մշակման գործում ունեցած ներդրումը կդիտարկվի որպես առավելություն:

դ. Դրամաշնորհային ծրագրի մշակման և/ կամ իրականացման փորձ և գիտելիք:

ե. Տեղական տնտեսական միջավայրի հստակ իմացություն, Հայաստանի մասնավոր հատվածի և հանրային սեկտորի հետ համագործակցության փորձը կդիտարկվի որպես առավելություն:

ե. Անգլերեն գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ:

զ. Համակարգչային իմացություն:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի «Ուղեցույցի՝ ՎՀՄԲ փոխառությունների եւ ՄՀԱ վարկերի և

դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2011 թ. հունվարին հաստատված «Համաշխարհային բանկի Վարկառուների կողմից ՎՋՄԲ վարկերի և ՄՋԸ վարկերի ու դրամաշնորհների շրջանակում խորհրդատուների ընտրության եւ վարձելու ուղեցույցներ», շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. հուլիսի 22-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 1, 3-րդ հարկ, 314 սենյակ
Հեռ՝ (374-11) 91 05 81, 91 05 94
Էլ-փոստ՝ info@ffpmc.am